


ռուբլի: Սինօդն առանձնապէս հետաքրքրվում է ջրի խնդրով:

Խաթունախարիս և Քիւլթափա կոչված էջմիածնապատկան խոտհարքի կապառալու պ. Թադէոս Ասկարեանը խնդրամատոյց է եղել ս. Սինօդին թոյլ տալ իրան որոշ պայմաններով այդ հողերի վրայ մեքենայի օգնութեամբ ջուր հանել խոտահարքը վարելահող դարձնելու համար:



ԱՅԼ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

Յունվարի 31-ին Русское Слово թերթին նարոտուելից հեռագրում են.

Վանահայր Արսէն վարդապետը ժամերգութիւնից յետոյ այսօր հանգիստուր կերպով անաթէմա կարդաց յեղափոխականներին, հրէաներին և առհասարակ յեղափոխական շարժման ընդոր մասնակցողներին, իսկ Ելօրիոդ արեղան մաղթանք կատարեց ռուս ժողովրդի միութիւն կոչուած կուսակցութեան համար:

Նոյն թերթում կարդում ենք.

Նիկօլսիկ աւագ քահանան, որին Մոսկվայի և Վալմոնայի միտրապալիտ Վլադիմիրի կողմից յանձնարարուած էր քննութիւն կատարել դպիրների «ինքնագլուխ կազմած միախնդներ» մասին, վերջացնում է իւր վրայ դրած պարտականութիւնը: Լրագիրների ասելով ամենից շատ մեղաւոր են Մոսկվայի եկեղեցիների դպիրներ՝ Ֆիլէյսիկ և Յվիտիով: Նրանց յանցաւորութեան ծանր կողմը համարւում է այն, որ նրանք միախնդի ժամանակ իրենց թոյլ են տուել յուզարկաւորութեան քայլերդերդել աղատութեան համար կոռուզիաների յիշատակին և դրամ հաւաքել լիոստ-հեռագրական գործադուլին մասնակցողների օգտին:

«Наша Жизнь» թերթից քաղուածօրէն առաջ ենք բերում հետեւեալը. —

«Եկեղեցական վերանորոգման կողմնակիցներն» միութեան պատկանող Պետերբուրգի քահանաների խումբն այս օրերս հրատարակեց յօդուածների մի ժողովածու «Եկեղեցական համաժողովի առթիւ» վերնագրով, որոնք զանազան ժամանակներում լոյս էին տեսել այլ և այլ թերթերում: Այդ ժողովածուի առաջին ճառը գրուած է դեռ 1905 թուի մարտի 15-ին «Եկեղեցու կանոնական ազատութեան վերականգնման անյետաձգելիութեան մասին», իսկ վերջին յօդուածը 1906 թուի յունվարին, երբ քահանայք որոշ չափով հասան Բաղաւաղիցներին հաւասար իրաւունքների: Առաջ նրանց նստացնում էին զուտ դասակարգային բանաբեր, իսկ այժմս փակում էին նրանց ժողովրդի հետ միասին քաղաքական բանտերում: Նամակագիրը չի մանում ժողովածուի քննութեան մէջ, գտնելով, որ դա կրօնական մամուլի դործն է, այլ առում է հետեւեալը:

Ես կարծում եմ, որ Պետերբուրգի քահանաների խումբը խիստ լուրատես է: Պրաւօսլաւ հաւատը, որը հազիւ թէ կարելի լինի քրիստոնէական վճիռ արտայայտութիւն համարել, դժուար կարող է վերանորոգման ենթարկուել: Կամ ինքնակալութիւն և կամ պատրիարքութիւն — դրանք են պրաւօսլաւ հաւատի շէնքի միակ երկու պսակները: Այլ կերպ՝ նա էլ կաթոլիկութեան պէս գոյութիւն ունենալ չի կարող, որովհետեւ պետութեան և ժողովրդի հետ նա ուրիշ կապ չունի: Կամ գիտակցաբար պէտք է դուրս գալ պրաւօսլաւութիւնից և յանուն մի տիեզերական եկեղեցու՝ աշխատել նոր եկեղեցի կազմակերպելու համար. այն ժամանակ պրաւօսլաւ եկեղեցին կը դառնա հնաժես եկեղեցու նման մի բան, կամ պէտք է մնալ պրաւօսլաւ. այդ դէպքում ամբողջ վերանորոգութիւնը տեղի կ'ունենայ մանր բաներում՝ ծխի կազմակերպութեան, հոգևորականների ապահովութեան և այլն: Պրաւօսլաւ եկեղեցու իդէալը կայանում է աշխարհից միանգամայն քաշուելու մէջ: Միայնակեցութիւն, ճգնութիւն, անձնական իրկութիւն ահա նրա մշտական ձգտումն: Այն ինչ՝ արտաքին աշխարհում նա անպայման հնազանդուած էր և կը հնազանդուի պետական իշխանութեան անաստուած Ղևիթանին: Եւ պարզ բան է, որ կրօնական սրբագործութեամբ պաշտպանուող ինքնակալութիւնը նրա համար ամենաընդունելի ձևը կլինի: «Слово» թերթում վերջերս տպուեց Ս. Պետերբուրգի հոգևոր ճեմարանի ուսուցչապետ Ա. Բիլիւնովի յօդուածը, որտեղ ուսուցչապետը ջերմա-

գին հակաճառում է ազատամիտ Անտոնին եպիսկոպոսին և ապացուցանում, որ պրաւօսլաւ եկեղեցին ինքնակալութիւնից բոլորովին չի խորշում, ինչպէս այդ կարծում է սրբազանը. և պէտք է խոստովանուել, որ Արքիւրոնովի պատճառաբանութիւնները միանգամայն համողիչ են:

Ուրիշ խօսքով պրաւօսլաւ եկեղեցու վերանորոգումը—վերածնութիւնը բնադանցօրէն անկարելի է: Այստեղ հնարաւոր է յեղափոխութիւն, բայց ոչ վերանորոգում:

Պետերբուրգի քահանաների խումբը կողմնակից է բարենորոգման և հետեւապէս միանգամայն համաձայն կառավարութեան հայեացքների, ուրեմն և կառավարութիւնն ու հոգևոր բարձր իշխանութիւնը պէտք է հովանաւորէին նրան, հնարաւորութիւն տալին աշխատելու և ազատօրէն յայտնելու իրենց կարծիքը: Բայց այդ չի երևում: Թէև Անտոնիոս միտրապօլիտը շատ բարեացակամ է վերաբերւում նրանց, սակայն դա միայն պղատօնական համակրութիւն է և ուրիշ ոչինչ: «Միութիւնը» դեռ օրինական չէ, չունի իւր սեփական օրգանը և նրա անդամները ամեն ըսպէ կարող են պատժուել: Եւ այլ այն ժամանակ, երբ իւրաքանչիւր թեմում հրատարակւում են անշնորհ «թեմական համբաւաբերներ»:

Նրանք արդէն գտել էին փորձուած հրատարակիչ և ձեմարանի նախկին Դօցէնտ Քարտաշեին խմբագիր հրաւիրել և շնայեաժ յայտնի Պետրով քահանայի ջանքերին, գործը գլուխ չի եկել:

Բայց սկսածը լաւ գործ է. անշահառէր, համոզուած և գաղափարական մարդկանց ձեռքով սկսած, որոնք պատրաստ են տանջուել իրենց համոզմունքների համար:

Նրանց ջանքը ինչ հետեւանքների էլ հասնելու լինի, միայն այն հանգամանքը, որ հոգևորականների մէջ էլ լսուեց աղնիւ խղճի անկեղծ ձայնը, շատ մեծ գին և նշանակութիւն ունի:

«Պետերբուրգի քահանաների խումբն» այն կամուրջն է եկեղեցուց դէպի ժողովուրդը, որի վրայ հակառակ կողմերը կարող են իրար հանդիպել և խաղաղ սահմանադէմ իրենց քաղաքակրթական շահերը: Եւ ռուս յառաջագէմ հասարակութիւնը, որի համար թանկ է Ռուսաստանի բարեկարգութիւնը և նրա քաղաքակրթական վերածնութիւնը, պարտաւոր է օգնութեան ձեռք մեկնել ազատ եկեղեցու համար մարտնչողներին և առանձին ուշադրութեամբ լսել նրանց ձայնը:

—Ողջունելով Պետերբուրգի քահանաների այդ գեղեցիկ քայլը և կատարեալ յաջողութիւն մաղթելով նրանց, կ'աւե-

լացնենք, որ եկեղեցին պէտք է կատարեալ հայելի լինի ժողովրդի կեանքի և հոգեկան պահանջներին, որովհետեւ այլապէս նա չկայ և գոյութիւն չի կարող ունենալ: Նա պէտք է լինի այն լուսատու ճրագը, որը գործնականապէս տանում է դէպի արդարութիւն և հաւասարութիւն և մի միայն այդ ձևով կարող է նա երկրի աղը լինել և ոչ թէ աղ կոչուած տեղը մարդկանց իրար դէմ զինել ու թունաւորել:

Պաշտօնից արձակուած և կարգալոյծ է արուած Ռոստովի շրջանի քահանայ Վօլիովը յեղափոխութիւն քարոզելու պատճառով:

Սուջանի դաւառի գործակալներից մէկը հրաման ոտանալով քննել քահանայի գիւղացիական միութեան պատկանելու գործը, հրաժարուել է իրեն արած յանձնարարութիւնը կատարելուց, որովհետեւ գիւղացիք ռպառնական դիրք են բռնել նրա թէմ: Գործակալը խնդրում է յատուկ աստիճանաւոր ուղարկել այդ նպատակով:

Երապուի վանքի վանահայր Արսէնը, որ անաթեմա էր կարգացել ազատագրական շարժման մասնակցողներին, աքսորւում Սալաւեցկի վանքը Ռուսական ժողովարանի միջնորդութիւնը նրան ներելու մասին թողնուած է անհետեւանք:

Այն յետագէմ ուղղութեան և հալածանքի շնորհիւ, որ տեղի ունեցաւ վերջին երեք ամիսների ընթացքում կեանքի և կենդանութեան նշոյլ ցոյց տուող քահանաների դէմ, ահագին ներգործութիւն ունեցաւ գիւղական քահանաների վրայ, որոնց շրջանում անընդհատ աճում է շարժումն ու դժգոհութիւնը: Քաջ գիտենալով ոոյն մեծ դերը, որ խաղում էր հոգեւորականութիւնը ռուս ժողովրդի կեանքում և հաշտեցնում նրան ամեն տեսակ նեղութեան և տոնջանքի հետ յանուն պրաւօսլաւ հաւատի, Պետերբուրգի շրջաններում սաստիկ վախենում են շարժման հակառակ ուղղութիւնից և այդ հանգամանքը մեծ մտահոգութիւն է պատճառում այնտեղ: